

Տարեկան գինը 10 բուրդկէս տարվանը 6 բուրդկէս տարվանը համեմատելով 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն Խմբագրատան մէջ:

() Խմբագրատանը գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусах“

ՄՇԱԿ

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Խաջի կերակի և Ծոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անճաւորութիւն և ամբողջութիւն.— Եւր. քին
տեսութիւն: Նամակ վաղարշապատից: Նա-
մակ Մեծ-Վարաքիսից: Նամակ Կոզլից: Նամակ
Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—
Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Յունաս-
տան: Եւրոպայի տարածութիւնը: Նամակ Թիւր-
քիայից: Նամակ Թիւրքիայից:—Մշակիչ հեռա-
գիրներ:—Հայտարարութիւններ:

ԱՆՃԱՎՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ

Տգէտ, մոլեւանդ և խաւար
մարդկանց յատուկ է մի անճա-
ւորութեան պակասութիւնը վե-
րաբերել ամբողջ հասարակութեա-
նը կամ ազգութեանը:

Այդ տեսակ խոշոր պակասու-
թիւնից պէտք է ազատ մնային
հասարակական առաջնորդները,
հասարակական օրգանները,—բայց
դժբաղդապէս այսպէս չէ: Հատ-
անգամ հասարակական կարծիքի
առաջնորդը, լրագրագետը նոյն-
քան տգէտ, նոյնքան մոլեւանդ,
մտաւորապէս նոյնքան անզարգա-
ցած է, որքան ամենախաւար ամ-
բողջ:

Մի օտարազգի գալիս է Թիֆ-
լիս, գնում է փողոց, առնում է
մի հայ վաճառականի մօտ այս
կամ այն առարկայ: Հայ վաճա-
ռականը նրան խաբում է, շատ
թանկ է ծախում ապրանքը: Եւ
ահա օտարազգին մի հայի պա-
կասութիւնը սկսում է վերաբե-
րել ամբողջ ազգութեանը, սկսում
է բոլոր հայերին խաբեայ անուա-
նել:

Մեր խաւար, տգէտ և մոլե-
ւանդ լրագրագետը, կամ հասա-
րակական գործիչը, վրդովվում է,
ի հարկէ, օտարազգու վարմուն-
քից, բայց չէ անցնում մի օր—և
նոյն պարոնը սկսում է նոյն կեր-
պով վերաբերվել զէպի իր կաթո-
լիկ կամ բողոքական հայ եղբայր-
ները:

Ասէ՛ք թէ մի օր և է Պոյա-
ճեան դաւաճանում է իր ազգու-
թեանը,—միթէ այդ պատճառով
մենք պէտք է յարձակվենք բոլոր
հայ-բողոքականների դէմ, ինչպէս
այդ անում է օտարազգին, հայհո-

յելով ամբողջ հայոց ազգութիւնը,
որովհետեւ մի անգամ խաբված է
եղել մի հայ վաճառականից:

Ինչ կասէին մեր ինտելիգեն-
ցիային պատկանող խաւար անճ-
աւորութիւնները, որոնք իրանց
ուղեղի մէջ հաւի չափ խելք էլ
չունենալով, յանդգնում են առաջ-
նորդել հասարակական կարծիքը,
ինչ կասէին նրանք, եթէ նրանց
սիստեմային հետեւելով, մի կա-
թոլիկ կամ բողոքական հայ ասէր
լուսաւորչական հայերին՝ «Վանի
առաջնորդ Երեմիա եպիսկոպոսի
քարոզը ցոյց է տալիս որ լուսա-
ւորչական եկեղեցու բոլոր հոգե-
ւորականները տգէտ՝ անխելք, մո-
լեւանդ են...» Անշուշտ դուք կը
վերաբերվէիք որ մի Երեմիայի
պակասութիւնը վերաբերում են
ամբողջ հոգեւորականութեանը, և
անկասկած կը պատասխանէիք.
«Եթէ մենք ունենք Երեմիա ե-
պիսկոպոսի պէս մի տխմար անճ-
աւորութիւն մեր հոգեւորական
դասի մէջ, ուրիշ կողմից մենք
թէ մեր անցեալում ունէինք ե-
րեւելի, խելօք հոգեւորականներ, թէ
մօտիկ ժամանակներում ունէինք
Ներսէս Կաթողիկոսի պէս մի
պետական մարդ, Այվազովսկու
պէս մի գիտնական, ունենք և
այս րօպէիս Ներսէս պատրիարքի,
Խրիմեանի, Նարբէի պէս լուսա-
ւոր անճաւորութիւններ մեր ե-
կեղեցական դասակարգի մէջ»:

Ինչ որ չէք կամենում որ ձեզ
անեն,—չը պէտք է ուրիշներին
էլ անէք: Եթէ չէք կամենում
որ բողոքական կամ կաթոլիկ
հայը մի լուսաւորչականի պակա-
սութիւնը վերաբերի ամբողջ ազ-
գին, կամ դասակարգին,—չը պէտք
է նոյնն անէք և նրանց վերաբե-
րութեամբ:

Օրինակ շատ ցաւալի, վիրա-
ւորելի, անարդար և միանգամայն
պակասական կը լինէր, եթէ մի
օտարազգի ուսումնասիրած լինե-
լով հայոց լեզուն և կարգաւորվ մի
որ և է յիմար, բթամիտ, մոլե-
ւանդ, խաւար, անազնիւ հայոց
լրագիր,—այդ լրագրի մօրերի և
նրա խմբագրի ստոր անճաւորու-

թեան համեմատ կազմէր իր կար-
ծիքը և ամբողջ հայոց ազգու-
թեան մասին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՐՈՐԾԱՊԱՏԻՑ

8 յուլիս

Անցեալ յունիս ամսի 26-ին կատարվեցաւ Էջ-
մրածնում արժանաւայելի եկեղեցական հան-
դիսով եպիսկոպոսական ձեռնադրութիւն: Լի օր
լինելու պատճառով աւելի շատ բազմութիւն չը
կար եկեղեցում: Վ. հ. Կաթողիկոսը ինքն չէր
ժամարար հիւանդութեան պատճառով, այլ միայն
կատարեց ձեռնադրութեան կարգը: Նորապսակ
եպիսկոպոսներն էին Տաճկաստանից եկած Հմա-
յակ Գիմարեան, Նախկին խմբագիր Կ. Պօլսի
Վոյս ամառգրի և այժմեան նոր առաջնորդ Եր-
զնկայի վիճակում, և Ղևնդ վարդապետ, Պիլե-
ճիկի նոր առաջնորդ: Այս անգամ Էջմրածնի միա-
բաններէն ոչ ոք արժան չը համարվեցաւ եպիսկո-
պոսութեան:

Բայց ամսոյ 5-ին Ս. Գալիանեան վանքի եկեղե-
ցում արժանաւայել հանդիսով ծաղրագոյն
վարդապետութիւն ստացան Երեմիայի պրօ-
գիմալայի կրօնուսոյց Կարապետ վարդապետ
Այվազեան, Խորէն վարդապետ Ստեփանէն և
Վահան վարդապետ Բաստամեան: Ներկայ կա-
թողիկոսի օրով, գրեթէ 15 տարվայ մէջ, այս
առաջին անգամն է որ տրվում է ծայրագոյնու-
թիւնը Էջմրածնի միաբաններին, մինչդեռ Տաճ-
կաստանում ամեն արեղայ շատ չուտով ստանում
է այդ բարձր եկեղեցական գիտնական կոչումը:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ՄԵՏ-ՎԱՐՈՐԻՒՄԻՑ

6 յունիս

Գարնան սկզբից մինչև յունիսի 15 յորդառատ
անձրևները անդադար տեղադրել, չոր քարերն էլ
սկսեցին կանաչել: Իսկ յիշեալ ամառից մինչև
այսօր ոչ միայն մի կաթիլ անձրև չէ ընկել թը-
շուա երկրագործի արտի վրա, այլ մի և նոյն
ժամանակ այնպիսի զարհուրելի չոր է լինում, որ
բոյսերը սկսել են խանձվել: Առաւօտեան առատ
ցողերի օգնութեամբ միայն կարողացան արտերը
դիմանալ ցերեկվայ կիռիչ շոգերին, որի տակ ոչ
մի կենդանի հինգ րօպէ չէ կարող համբերել:—
Միայն երկու լաւ անձրևի կարօտութիւն ունենք,
այնուհետեւ այնքան առատութիւն կը լինի, որի
նմանը շատ քիչ է տեսնված:

Անցեալ օրը Վարաքիսի մի քանի բարեպաշտ
կանայք բոլորի ոտքով տնէ տուն շրջելով մատաղի
պատրաստութիւն էին տեսնում, որ անձրև դայ:
Չը նայելով կարճատև երաշտութեանը, դարձեալ
կարելի է ասել, որ արտերը վատ չեն:

Վերջին ժամանակներս Վարաքիսում կրկնվում
են գիւղերային խոշոր գողութիւններ: Աւելի դար-
մանալին այն է, որ անցեալ օրը ցերեկով մտան մէկ
զարաթիւիկներ, տուն և ինչպէս պատմում են, հա-
զար ուրբուց աւելի նաղը փող են տարել: Չա-
նագան մարդիկ այս գողութիւնների առթիւ կա-
կածաճնների են ենթարկվում, բայց դրակամապէս
ոչինչ դուր չէ գալիս և չարագործները ուրիշների
արդար վատտալը յափառակելով, ուսում ու արհիւ
առաջ ման են դալիս:—Այժմ վարձված են գիւղե-
րապահներ: Տեսնենք վերջ կը դրվի այդ անկար-
գութիւններին:

Այլ քանակապալի չափաւն հարեցողներէն մի
խումբ, որոնք չը գիտեն ինչով են պարապում

այստեղ, դաւալ դուռնաչին առաջները գցած, գի-
նու չիւն և բաժաններ ձեռքերը, չերեզվանները
հանած, չիք ես ստալ ասելով, պարելով, զանա-
զան կենացներ կոնծելով, առուս, ուսուս գողա-
լով, փողոցները չափելով, օր-ցերեկով մանում են
բաղարը, կանգնում են մի գինեվաճառի խանու-
թի առաջ, խմում են, դատարկ չիւնը լցնում են
և վերջապէս դուրս են դալիս բաղարից, և այդ-
պիսի խայտառակ հանդիսով կրկին մտնում են
թաղերը: Օրիորդներ, կանայք, հարսներ դուրս են
թափվում և կտուրներէն նայում էին հանդիսին:
Իսկ մի խումբ ջանել պատանիներ և մանուկներ
զուարճութեամբ քաշ էին դալիս այս հարեցող-
ների ետեւից, որոնք իրանց լիւր օրինակներով
վատ սերմեր են ցանում անփորձ մանուկների
սրտի մէջ:

Սրանից մի քանի շաբաթ առաջ Սարիբէյ քէօխ-
վէն ցանկանում էր մի փողով կաղմել: Վարաքի-
սում պարապող օտարականների մասին, թէ որ-
տեղացի են, ինչպիսի մարդիկ են, ինչ վարուց բա-
րուց տէր են, որքան ժամանակ են ուղևոր մնալ
Վարաքիսում և վերջապէս դրանց բոլոր գործու-
նէութեանց վրա ուշք դարձնել, որ չը լինի թէ
որտեղ մի թուր կտրած կայ, դայ Վարաքիսա
բուն դնի և ընկնէրին էլ խաբար անի: Իմ կար-
ծիքով սա շատ լաւ միտք է, եթէ իրագործվի:
Իսկ վերջիցեալ չափաւնների արած անկարգու-
թիւնը յոյսով եմ, որ վերջինը կը լինի:

Ս.

ՆԱՄԱԿ ԻԳԻԻԻՑ

Յուլիսի 10-ին

Այս տարվայ սաստիկ թանգութեան ժամանակ
Ստրմալուի ամբողջ դաւառում տարածվեցաւ սո-
վատանջ քիւրդերի մեծ բազմութիւն, որոնք գլխա-
ւորապէս եկել էին Բայազէդի կողմերից: Սովի
ժամանակ դրանք ապրում էին ողորմութեամբ, որ
ստանում էին հայերից, բայց երբ ձմեռը անցաւ,
ցանքերը հասունացան, այժմ որ հունձքի ժամա-
նակ է, նոյն քիւրդերը սկսել են գիւղերը կո-
ղոպակ հնձած արտերի վրա մնացած խորձերը,
Տեղային ժողովուրդը քրդերի այս յափշտակու-
թիւնները նախազուշակելով, վարդօրք խնդրեց
դաւառապետին, որ աքսորէ նրանց իրանց երկ-
րից, բայց ոչինչ բաւականութիւն չը ստացան:

Այս տարի հունձքը շատ առատ է, ցորենի
խաղվարը (30 պուդ), ծախվում էր առաջ 150
մինչև 200 բուրդ, իսկ այժմ 35—40 բուրդ:
Իդրիլի երկսեռ դպրոցների հարցաքննութիւնը
վերջացաւ շատ աղօղ կերպով: Մանաւանդ օրի-
որդները բաւական առաջադիմութիւն էին արած
թէ ուսման և թէ ձեռագործութեան մէջ: Չը նա-
յելով որ հարցաքննութիւնը տևեց 15 օր, բայց հո-
գաբարձութեան ոչ միայն ներկայ չէին: Վարժա-
պետների մէջ գոյլի էին տեսուչ պ. Քալանթա-
րեանցի և ուսուցիչ պ. Հալաբչեանի ջանքերը:

Իզդրեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, ապրիլ

Նուրբատունների ցուցակը, որոնք փողեր նուր-
բեցին յօգուտ Վանի սովատանջների:
Հովուեանց Սրբատ 1 ր., Ստեփանեանց Մա-
նուկ Կալապիտայի 1 ր., Բայազէդեանց Նիկողայոս
20 4., Ալահաբեկեանց Ստեփան 1 ր., Միլիկեանց
20 4., Միլիկեանց Աւետիս 30 4., Աղաբէգեանց
35 4., Սալաբեանց 1 ր., Յակոբեանց 1 ր., Սու-
սայեանց Սահակ 40 4., Չաւախեանց Յովսէփ
20 4., Ասատուրեանց 10 4., Միլիկեանց 1 ր.,
Աւագեանց 20 4., Պաւառեանց Սիմէոն 40 4.,

Ինչ 1 ր., Տէր-Թովմասեանց Մեղք 20 Կ., Թար-
խանեանց 20 Կ., Մի ոմն 1 ր., Ղազարեանց
Սարգիս 1 ր., Տէր-Սարգսեանց 40 Կ., Տէր-Մարկո-
սեանց Յովսէփ 40 Կ., Բորիսեանց 1 ր., Աստու-
ծաբանեանց Յովհաննէս 40 Կ., Ոմանք 32 Կ., Խալա-
թեանց Գրիգոր 1 ր., Տէր-Յակովբեանց Առաքել
20 Կ., Սարախեանց Խաչ 20 Կ., Ախտեանց 40
Կ., Խոզաղեանց 1 ր., Ամիրաղեանց 60 Կ., Զո-
րեանց 30 Կ., Զօրեանց Ռուբէն 30 Կ., Լալեանց
Աւետիս 40 Կ., Մարինեանց 30 Կ., Սարգսեանց
20 Կ., Մեղքեանց 1 ր., Թովմասեանց 1 ր., Ղան-
դուկեանց 1 ր., Սանդրոսեանց 20 Կ., Հակոբե-
րեանց 20 Կ., Նախրեանց 1 ր., Ստեփանեանց 1
ր., Խոզաղեանց 20 Կ., Դանիէլեանց Հախնաղար
60 Կ., Սալմաթեանց Միքայէլ 1 ր., Միսինեանց
20 Կ., Ղարախանեանց Միքայէլ 1 ր., Սարաղեանց
1 ր., Մի ոմն 1 ր., Տէր-Մարկոսեանց Անտոն 1 ր.,
Ղօրղանեանց Անտոն Սոյոմոնեան 10 ր., Աղա-
մեանց 40 Կ., Սարգսեանց 1 ր., Աւետիսեանց 1
ր., Ռոտինեանց 1 ր., Սառաթեանց 20 Կ., Մա-
տուրեանց 1 ր., Ղազարեանց 1 ր., Մեհրաբեանց 1
ր., Խլմիրեանց 1 ր., Բուդուրեանց 20 Կ., Սա-
նաթաղեանց 25 Կ., Արաքսեանց 1 ր., Աղաթ-
նեանց 15 Կ., Յովսէփեանց Եագոր 1 ր., Ե-
ղիազարեանց 1 ր., Թովմասեանց 20 Կ., Սիւսեանց
տիկին 1 ր., Մաղուկեանց 30 Կ., Մեղքեանց
1 ր., Արուսեանց 50 Կ., Միքայէլեանց 3 ր.,
Մատինեանց տիկին 1 ր., Տէր-Ստեփանեանց 1
ր., Աղաթեանց 2 ր., Շահմեղեանց 15 Կ., Օրի-
որդ ոմն 40 Կ., Հայ մարդ 3 ր., Խանդաբեանց
1 ր., Ղալուկեանց 1 ր., Նուրբանեանց 1 ր., Գի-
գո 5 Կ., Ոմն 20 Կ., Ոմանք 21 Կ., Մանուշա-
րեանց 1 ր., Ղալինեանց 20 Կ., Յակովբեանց 1
ր., Նաւտիկեանց 50 Կ., Սանաթաղեանց 1 ր.,
Աղիբեք Մեղքեանց 1 ր., Ղազարեանց 1 ր., Զա-
րաղարի վրացի 1 ր., Արղումեանց 30 Կ., Քա-
լանթարեանց 50 Կ., Ղազարեանց 1 ր., Գարե-
շեանց 20 Կ., Բարանասեանց 1 ր., Յարութիւ-
նեանց 1 ր., Կուզանով 1 ր., Բայրազդու 1 ր., Ա-
լիբեքեանց Յովհաննէս 20 Կ., Բէլախեանց 1 ր.,
Ստեփանեանց 2 ր., Մատինեանց 2 ր., Սպանդա-
րեանց 1 ր., Փոլղինեանց 1 ր., Միքայէլեանց 1
ր., Փրիլեանց 1 ր., Տէր-Պետրոսեանց 1 ր., Ու-
լուխանեանց 40 Կ., Փոլղինեանց 1 ր., Միքայէլեանց
30 Կ., Քիչմիշեանց 1 ր., Մի քանի մշակներ 25
Կ., Բարսեղեանց 20 Կ., Մի մշակ 5 Կ., Քազա-
րեանց 40 Կ., Առաքելեանց 40 Կ., Տէր-Միքայ-
եանց 1 ր., Բարսեղեանց Բարսեղ 50 Կ., Տէր-
Գրիգորեանց Կարապետ աւագ քահանայ 1 ր.,
Միսինեանց Մնացական 1 ր., Զարափեանց Յա-
կովբ քահանայ 1 ր., Միքիմանեանց տիկին 2 ր.,
Աստուածաբանեանց Կապիտան 1 ր., Պապեանց
Յովսէփ 1 ր., Միքիմանեանց Աղէքսանդր 1 ր.,
Ղարախանեանց Բովիշ 1 ր., Լովինեանց 1 ր., Մար-
թարեանց Բովիշ 1 ր., Գալուսեանց Գէորգ քահա-
նայ 1 ր., Համադաս քահանայ 15 Կ., Մի մշակ
30 Կ., Մի մշակ 25 Կ., Պապեանց Յովսէփ 30 Կ.,
Արթուրեանց Գէորգ քահանայ 1 ր., Մի հայ 3 ր.,
Ոմանք 2 ր. 75 Կ., Ղամաթեանց 50 Կ., Երեք մը-
շակ 1 ր., Մեհրաբեանց Եսայի քահանայ 60 Կ.,
Ոմանք քիչմիշ ծախողներ 2 ր. 40 Կ., Մի ոմն 10
Կ., Աղ և ալը 5-ից մինչև 10 Կ. պէտէնեանով 3
ր.:

Ընդամենը 126 ր. 53 Կ. ժողովցիներ վերադարձաւ
գումարը խօշմանքի հանգստարանում, իսկ միւս
հետեւեալ երեսներ վանքի գաւթում. Յովհաննիսեան
Կարապետ 20 Կ., Ղարապետեանց 20 Կ., Մի ոմն
20 Կ., Տէր-Ստեփանեանց Պետրոս 10 Կ., Ղամե-
րեանց Յարութիւն 20 Կ., Գրեթեանց Գէորգ
2 ր., Ալիսպեանց Աղէքսանդր 1 ր., Անցորդ
Ղարապետ 1 ր., Մեհրաբեանց 1 ր., Առաքե-
լեանց 20 Կ., Մի ոմն 20 Կ., Երմայեանց Նանս
տիկին 20 Կ., Բալինեանց 1 ր., Տէր-Աստու-
րեանց Մարթայ 2 ր., Զարդեղեանց Բաղդասար 1
ր., Մի ոմն 20 Կ., Մի ոմն 20 Կ., Սարգսեանց
Ստեփան 20 Կ., Տէր-Գէորգեանց 50 Կ.:

Ընդամենը 11 ր. 60 Կ. Մեղ մօտ կար հանգս-
տարանում ժողովածից 6 ր. 53 Կ., ունիք ստա-
նալու 18 ր. 13 Կ.:

Սմբատ Հովութեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԱՐԻՆ

Ռաշտ, յունիս 1

Մարտի 26-ին վանի սովատանջ եղբայրների
համար խմբագրութեանը 200 բուրլի ուղարկելէն
յետ, կրկին այստեղ շարունակվեց ստորագրութիւնը.
մի քանի պատեւի պարոններէ 32 բուրլի նուր-
բատութիւն յիշեալ սովալուկների համար հաւա-

քելով, առ նամակի մէջ ներկայեց ուղարկում եմ
յիշեալ գումարը, պարոն խմբագրի, խնդրեմ ստանա-
լով որտեղ հարկն է հասցըք, և ի միամտութիւն
նուիրատուների անունները կը խնդրեմ ձեր լրագրի
էջերում տպէք: Կարապետ Արտեմով 7 ր., Փար-
սատանեանց 3 ր. 75 Կ., Աւետիս Աղայեանց 3 ր.
75 Կ., Գրիգոր Յովսէփեանց 3 ր. 75 Կ.,
Յովհաննէս Պարտեան 3 ր. 75 Կ., Հայրապետ Պա-
րոնեանց 3 ր. 75 Կ., Սիմոն Շահնազարեանց 3 ր.,
Արգար Գալուսեան 1 ր. 50 Կ., Յակովբ Նիսանեան
1 ր. 12 1/2 Կ., Անցայտ ոմն 62 1/2 Կ., Գումարն է
32 բուրլ:

Ղազար Յակովբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեր ԹԻՖԼԻՍԻ հարուստ վաճառականները,
ինչպէս մեզ պատմում են, շատ անխիղճ կերպով
են վարվում իրանց անայլի վարժապետների հետ:
Մեծ ժառանգ այդ տեսակ վարժապետներ լինում
են զինավազի և իշխանական դպրոցի քաւոր հայ
աշակերտները: Մի այդ տեսակ անայլի վարժա-
պետին վարձում է մեր հարուստ վաճառականը
իր որդիներին դաս տալու կամ դասերը կրկնելու
համար, խոստանում է իր տան մէջ մի սենեակ և
ճաշ բացի 10—15 բուրլ ամսական ուժիկից, յե-
տոյ երբ նշանակված օրը երկուստեքը գալիս է,
հարուստ հայ վաճառականը ստում է թէ սենեա-
կը պատրաստ չէ, համբերեցէք մի քանի օր,
բայց դաս տալ դասկներին կարող էք և այլն...
Այդպիսով շարունակվում է մի քանի շաբաթ
այսօր-էգուց զգելով սենեակի պատրաստելը...
Այսպիսով երկուստեքը առանց սենեակ և ճաշ
ուժեհնալու, հեռու տեղ է գնում կամ ոտով, կամ
ֆայետով վրա իր դռները ծախսելով, դաս է
տալիս, իսկ վերջը իր ամսական ուժիկն էլ չէ
ստանում հարստահարող վաճառականից... Սա մի
քանի ժամանակ անվարձ բանեցնում է խեղճ երի-
տասարդին, իսկ յետոյ հրաւիրում է մի այլ վար-
ժապետին, որի հետ նոյն կերպ է վարվում: Մեր
հարուստները միջոց են գտել, ուրեմն, չքաւոր-
ները հաշտով անվարձ ուսում տալ իրանց զաւակ-
ներին:

Ղազարի գաւառի ԿՈՒԹԻ գիւղից մեզ գրում
են. «Մեր գիւղում և նրա շրջակայքում շատ ըս-
կալ են կրկնվել զոդութիւններ: Հայերը, որոնք
պարապում են այժմ հնձով դաշտերի վրա, իսկ
նրանց առաւորը սարակումն է, շատ անգամ են-
թաղվում են յարձակումներին թուրք աւա-
զակների կողմից: Տեղական պոլիցիական վարչու-
թիւնը արգելում է հայ երկրագործներին հրացան
վեր առնել իրանց անձը թուրք աւազակների դէմ
պաշտպանելու համար, ասելով որ թուրքերին էլ
արգելված է հրացաններ առնել և բանացնել,
ինչ ասել կուզէ որ թուրքը, ինչքան էլ արդեւ-
ված է իրան հրացան ունենալու, այնու ամենայ-
նիս նրանցից իւրաքանչիւրը երկու երեք հատ ու-
նի, որովհետեւ նա աւազակութեամբ է պարա-
պում, իսկ հայը երկրագործութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՐԱՆՍԻՆ

Լրագիրներին մէջ կարդում ենք հետեւեալ
տեղեկութիւնները:

Յրանսիայի մէջ դեռ ևս չեն վերջացել
թիթված հայրենասէրները, որոնց շնորհիւ
այդ երկրի լեզուն հարստացաւ «chauvinisme»
բառով: Այդ պարոնները երբէք չեն նայում
բարեմասութեան և առողջ դատողութեան
պահանջներին: Նրանք պահանջ են զգում
ժամանակ առ ժամանակ և զրեթէ միշտ
անտեղի այնպիսի հակապաշտպանական ցոյցեր
անել, որոնք իրանց երկրի համար շատ ան-
բաւականութիւններ պատճառ կարող են
դառնալ:

Յրանսիական մամուլի ներկայացուցիչներին
մէկը, պ. Էմիլ դը-Փրարդէն, միշտ եղել է
այդպիսի հայրենասէրներից մէկը: Նրա հա-

մար անտանելի է երկար ժամանակ մնալ հա-
սարակական տրամադրութեան մակերեւոյթի
վրա: Ժամանակ առ ժամանակ նա պահանջ
է զգում զարմացել, հասարակութեանը իր
կարծիքներին խտուրտեմբ, կամ նրանց հա-
կապութեամբ փրանսիական մամուլի մէջ տի-
րապետող կարծիքին:

Պ. դը-Փրարդէն երկի այդպիսի տրամա-
դրութեան մէջ էր, երբ ինքը գրեց, կամ
հրամայեց իր աշխատակիցներին մէկին գրել
«France» լրագրի մէջ տպված յօդուածը, որի
մէջ ասված է, թէ Ֆրանսիան զործնականա-
պէս չը պէտք է մասնակցէ պետութիւնների
ձեռնարկ Բ. Գրան վրա յունական սահման-
ների պատճառով, որովհետեւ «Ֆրանսիայի
համար անհրաժեշտ է իր զրօշակների կու-
սութիւնը ելլաւ-ւտարիւնդիայի համար պահ-
պանել»:

Այդպիսի յօդուածի համար սրանից ան-
շարժար և վտանգաւոր բոլոր դժուար էր
գտնել: Ժամանակաւորապէս հանգած «Արեժ»
խնդրութեան հարցի բարձրացնելը իսկոյն
նոր զրօշակները բաժանելուց յետոյ, վրեժ-
խնդրութեան մասին խօսել այնպիսի բուրբում,
երբ Գրանսիան վճռել է այլ ևս չը տօնել իր
յաղթութիւնները Ֆրանսիայի վրա, կը նշա-
նակի բոլորովին անձանթ լինել միջազգային
գործերի դրութեան հետ:

Պ. դը-Փրարդէն պէտք է գիտենայ, թէ
Գրանսիան ինչպիսի ուշադրութեամբ և
ակներև նախանձով հետեւում է փրանսիական
հանրապետութեան զինուորական վերականգ-
նանք: Նա պէտք է իմանայ, թէ ինչպիսի
ազատութեամբ Գրանսիան առիթ է վերն-
տառում այդ վերականգնման աջողութիւններին
վերջ դնելու համար: Եթէ Փարիզի մէջ ոչ
ոչ ուշադրութիւն չի դարձնի նրա լրագրի
այդ յօդուածի վրա, Բերլինի մէջ նա մեծ
աղմուկների պատճառ կը դառնայ:

Բերլինի պաշտօնական լրագիրները ի նկատի
չեն առնի, որ «France» լրագրի խմբագիրը,
նոյնպէս և նրա լրագիրը ոչինչ աղբիւրու-
թիւն չունեն Ֆրանսիայի մէջ և ոչինչ յա-
րաբերութիւն Ֆրանսիական կառավարու-
թեան հետ: Նրանք ուրախ կը լինեն այդ
միջոցին, որ կօղէ նրանց ցոյց տալ, թէ
իրանց կառավարութեանը օգնական գումար-
ներ ի զուր չեն ստանում:

«France» լրագրի յօդուածը գուրի է միւ-
շե անգամ ամենատարբարական լրագիրներից: Յան-
կարճ, ընդհանուր լուրի ժամանակ խօ-
սել «վրեժխնդրութեան» մասին և միևնոյն
ժամանակ յայտնել, որ Ֆրանսիան պէտք է
կամարադէս հրաժարվի օգուտ քաղել
այժմեան դէպքից առաջնակարգ դեր խա-
ղալու համար, բոլորովին անպատկառ է: Եթէ
ընդունենք միշտ և անգամ, որ Ֆրանսիական
զօրքերը կարող են յուսալ ծածանել իրանց
զրօշակները Ելլաւ-ւտարիւնդիայի հողի վրա,
այնուամենայնիւ միթէ դը-Փրարդէն չէ
հաւանում, որ Ֆրանսիայի համար անհրա-
ժեշտ է ունենալ այն պետութիւնների հա-
մալրութիւնը և շնորհակալութիւնը, որոնց
չէզոքութիւնը 1870 թուականի Ֆրանս-
գերմանական պատերազմի ժամանակ ամենից
շատ նպաստեցին այդ պատերազմի Ֆրան-
սիացիներին համար տխուր վախճանին: Իր
անտարբերութեամբ յիտաճիւղ այնպիսի գործ,
որի աջողութիւնը ցանկանում են Անգլիա և
Ռուսաստանը, կը նշանակի պատրաստել նոյն
բանի կրկնութիւնը, ինչ որ պատահեց 1870
թուականին:

Ֆրանսիայի սեփական շահերը պահան-
ջում են, որ նրա կառավարութիւնը չը հր-
աժարվի մասնակցել և եւրօպական պետու-
թիւնների ընդհանուր գործին յունական
սահմանների վերաբերութեամբ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լրագիրներին մէջ կարդում ենք հետեւեալ
թղթակցութիւնը Աթէնքից յուլիսի 3-ից:
Բերլինի կօնֆերանցիան վերջացրեց իր
աշխատանքները: Պետութիւնների կատարեալ
համաձայնութիւնը, բարձրացրած բոլոր հար-
ցերի վերաբերութեամբ, պէտք է աղբիւրու-
թիւն գործէ Բ. Գրան յամառութեան վրա:
Տարաբաղաբար կրօնական Ֆանատիկոսու-
թեան պատճառով թիւրքերի մէջ արմատա-
ցած համադմուքը, թէ առանց արիւնհեղու-
թեան չէ կարելի զիջել ոչ մի կտոր հող,
երկի այժմ էլ թող չի տայ թիւրքաց կա-
ռավարութեանը հպատակվել Բերլինի կօն-
ֆերանցիայի վճռին:

Այս դէպքում ինչպէս պէտք է գործէ
Յունաստանը և ի՞նչ միջոցների պէտք է
զիմէ: Այստեղ մեծամասնութիւնը այն կար-
ծիքի է, որ պետութիւնները իրանց չեն
յանձնի մեղ Բերլինի կօնֆերանցիայի վճռի
համեմատ մեզ գիշած նահանգները, այլ
կառաջարկեն թիւրքիային՝ դուրս տանել իր
զօրքերը Եպիրոսից և Քէսսալիայից, իսկ մեզ
զբաւել այդ նահանգները: Եթէ այսպէս
լինի, անհրաժեշտ է, որ մենք պատրաստա-
կան պատրաստութիւններ տեսնենք, որով-
հետեւ, եթէ թիւրքիան յիշեալ նահանգնե-
րից դուրս էլ տանի իր զօրքերը, այնտեղ
դարձեալ կը մնան նոյն թիւրքաց զօրքերը,
որոնք ալբանական զօրքեր են անուանված և
որոնց հետ մենք ստիպված կը լինենք պա-
տերազմել բաւական երկար ժամանակ:
Առ ժամանակ մեր կառավարութիւնը ոչինչ
նշան չէ ցոյց տալիս, որ նա մտադիր է
հարկաւոր դէպքում ուժով զբաւել մեզ
վիճակված երկրները: Գեռ ևս զօրքեր
պատրաստելու համար հրաման չէ տուած:
Միայն պաշտօնական լրագիրներից տեղե-
կանում ենք, որ կառավարութիւնը դիտա-
ւորութիւն ունի 40000 զինուորներից բաղկա-
ցած կանծաւոր զօրք պատրաստել և 6000
մարդիկ էլ երկրի մէջ հանգստութիւն պահ-
պանելու համար:

Այստեղ լուր է տարածված, որ Բերլինի
կօնֆերանցիայի մեր հաւատարմատուր պ.
Վրայլաս շուտով դեսպան կը նշանակվի
Փարիզի մէջ: Յայտնի է, որ մեր կառավարու-
թիւնը աւելորդ ծախսեր չունենալու նպա-
տակով Փարիզի և Վիեննայի համար միայն
մի դեսպան ունէր: Եթէ տարածված այդ
լուրը ճիշտ է, մեր կառավարութիւնը աւե-
լի լաւ ընտրութիւն չէր կարող անել, որով-
հետեւ պ. Վրայլաս մեր առաջին գիտա-
կաններից մէկն է և մեր պետական գործիչ-
ներից ամենալաւն է համարվում:

Կառավարութիւնը վերջապէս ուշադրու-
թիւն դարձրեց մեր արդիւնաբերութեան
վրա: Նա վճռեց զօրքերի համար մեր ար-
դիւնաբերած իրերը գործածել: Այդ նպա-
տակով զինուորական միւնիստրը յունական
գործարանատէրերին հրաւիրեց և պահան-
ջեց նրանցից իրանց արդիւնաբերած իրերի
օրինակները, որոնք աւելի լաւ են եղել, քան
թէ արտասահմանից բերածները:

Եպիրոսից յուլիսի 29-ից հաղորդում են,
որ տեղացի մահմետականները խորհրդակ-
ցել են, թէ ինչպէս պէտք է ընդդիմադրեն
Եպիրոսը Յունաստանի հետ միացնելուն և
վճռել են հէնց որ տեղեկութիւն կը ստա-
նան, թէ Բ. Գումար համաձայն է իրադո-
րել Բերլինի կօնֆերանցիայի վճիռը, իսկոյն
բարձրացնել ալբանական զրօշակը: Բացի այդ
որպէս զի իրանց վճռին աւելի մեծ նշանա-
կութիւն տան, նրանք վճռել են օրէնքներ
մշակել, որոնք ալբանական զրօշակը բարձրաց-
նելուց յետոյ ոյժ պէտք է ստանան: Այդ
օրէնքներից զիւտաւորներն են. 1) Ալբանա-
կան զրօշակը բարձրացնելու ժամանակ
իւրաքանչիւր բնակիչ պէտք է վճարէ այն
հարկի կէսը, որ նա տալիս է Բ. Գրանը զօր-

բեր կազմելու համար: 2) Անաստանների զորանայր արդիւրում է. անասուն զորանայր պէտք է վերադարձնել նրան տիրոջը և մարմնական պատժի ենթարկել: 3) Մարդասպանը մահուան պատժի է ենթարկուի: Այդ օրէնքները կատարելու համար ներքին պահպանի դորքեր են հաւաքուի: Քննչական կոմիտեի ստացված լուրերը չափազանց անհանգստացնող են: Քէ քաղաքի և թէ նրա շրջակայքի մէջ քրիստոնէայ բնակիչներին վիճակը տխուր և անտանելի է: Այդանցիկների առաջնորդ Օսման-բէյ սարսափելի կերպով հայտնում է քրիստոնէաներին, իսկ թիւրքաց կառավարութիւնը ուշադրութիւն չը դարձնելով այդ մարդու զազանութիւններին վրա, ինքն էլ զրգուում է մահմետական բնակիչներին քրիստոնէաների դէմ: Քրիստոնէաների ամենօրեայ սպանութիւնները և նրանց կրած տանջանքները ստիպելին նրանց դիմել Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Աւստրիայի և Իտալիայի հիւպատոսներին և խնդրել այդ պետութիւնների օգնութիւնը: Միթէ Ներսիսի ստանալ արտութեամբ կը համբերի, որ հազարաւոր քրիստոնէաներ զոհվեն մահմետականների շանտաճկութեանը և սրին:

ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱՄԱԿՐՈՒԹԻՒՆԸ

«Polit. Corresp.» լրագրի զիպոմատական թղթակիցը գրում է Փարիզից հետեւեալ յուլիսի 13-ից:

Ներսիսի քաղաքական գործերի դուրսութիւնը հեռահեռ ծանր բնաւորութիւն է ստանում: Կարելի է նշանաւոր անցքերի սպասել, եթէ այդ գրութիւնը աւելի հանգստացնող բնաւորութիւն չը ստանայ: Այդ նպատակին հասնելու համար պետութիւններին բարեմտութիւն և զգուշութիւն է պահանջուի: Ներսիսի վիճակը կատարելաժամանակ թիւրքերի վերաբերութեամբ: Կարելի է յուսալ, որ պետութիւններին մէջ համաձայնութիւն կը կայանայ, որպէս զի եւրոպական նոր դժուարութիւններ չը ծագեն: Առժամանակ Ներսիսի մերկութիւնը և նկատուի: մի քանի կառավարութիւններ կամաւորապէս ցանկանում են ազդող քաղաքականութեանը հետեւել թիւրքերի վերաբերութեամբ: Նրանք անգլիական, ռուսաց և գուցէ գերմանական կառավարութիւններն են: Միւս պետութիւնները աւելի լաւ են համարում թիւրքերի վերաբերութեամբ պահպանողական քաղաքականութեանը հետեւել: Այս վերջին արամադրութիւնը տիրապետում է Փարիզի և Վիեննայի մէջ: Պետութիւնները սկսում են համաձայնութիւն կայացնել, որովհետեւ բոլորի շահերն էլ պահանջում են խաղաղութիւն պահպանել: Միթէ հիւսնական ձգտումներն պատճառով Արեւելքը նշանաւոր անցքերի սպասելու պէտք է դառնայ: Արեւելքի բնակիչները պատրաստ են խեղդել միմեանց: զրա համար նրանք միայն նշան են սպասում: Արդեօք Ներսիսի պէտք է տա՞յ այդ նշանը: Արդեօք նա չը պէտք է արիւնհեղութեան առաջն առնել, կամ գոնեւ սահմանափակել պատերազմական դաշտերի թիւը: Պետութիւններին այս նպատակը և այն ինչ որ նորիցում պատահեց Ձերեօգործի վերաբերութեամբ, շատ լաւ նշան է համարվում: Անգլիան յայտնեց թիւրքերին, որ չերեօգործական հարցին պէտք է վերջ դնել: Նրանից յետոյ Անգլիան առաջարկեց առաջարկել ժամանակամիջոց տալ թիւրքերին Կորտիկ դաշնագրութիւնը կատարելու համար: Եթէ այս կամ այն պատճառով Կորտիկ դաշնագրութիւնը չը կատարվի, Ներսիսի կը ստիպի թիւրքերին

զիջել Կորտիկի ծովային ցոյցերի օգնութեամբ: Աւստրո-ունգարական կառավարութիւնը առաջ մերժեց այդ առաջարկութիւնը, բայց յետոյ համաձայնեց ընդունել: Ռուսաստանը նոյնպէս համաձայնութիւն տուեց, բայց այն պայմանով, որ ծովային ցոյցերի ժամանակ ոչ մի պետութիւն առաւելութիւն չունենայ: Ներմանիան լաւ վերաբերվեց այդ առաջարկութեանը, բայց հրաժարվեցաւ ուղարկել իր նաւերը: Աւելի մեծ ընդդիմադրութիւն Ռուսիան ցոյց տուեց, որ պահանջում էր անպատճառ իրազորել Կորտիկ դաշնագրութիւնը: Արշապէս իրաւական կառավարութիւնը համաձայնեց պետութիւններին հետ միասին գործել Կորտիկի վերաբերութեամբ, եթէ թիւրքերն հրաժարվի իրազորել Կորտիկ դաշնագրութիւնը: Այդ կէտի վերաբերութեամբ կառավարութիւնը անհերքելի օտանալուց յետոյ թիւրքաց կառավարութիւնը եռանդով վերաբերվեց գործին: Մինչև այժմ թիւրքերն սպասում էր, թէ ինչ եռանդ կը ցոյց տայ Ներսիսի և արդեօք կը դիմէ նա դիմել: Ներսիսի անհամաձայնութիւնից միշտ օգուտ քաղող թիւրքերը կարծում էին, որ այս անգամ էլ այդ անհամաձայնութիւնը կը տիրէ և իրանք դարձեալ օգուտ կը քաղեն: Բայց պետութիւնները համաձայն են գործում և Բ. Կուռը սկսում է գիշումներ անել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 5 յունիսի

Սուլթաններու սերայը միշտ նոյնը կը մնայ, Գաւ, սպանութեան, յեղափոխութիւն հոն դրած են իրենց բոյնը: Մարդ չը գիտեր ինչ ահաւոր գործեր կը կատարուին այդ ոսկեպատ սպարանքներուն մէջ, բայց երբեմն երբեմն զաղանք մը դուրս թափանցելով, մեզ ըմբռնել կուտայ ինչ կրնայ լինել կեանքը այդ Սուլթանին շուրջը: Սերային բոլորողը պատերը բարձր են, թիւրքերի էն քաջ զինուորները գիշեր ցորէկ կը հսկին դուրսը, իսկ ներսը կրտած սեպղէն ծառայներու բանակ մը կայ որ կը հսկէ նոյնպէս: Այս ամեն արթուն աչաց հսկողութեան խուսափելով, կին մը սերայէն կը փախչի, կառք մը կը բռնէ վարձով, Անգլիոյ դեսպանատունը կը դիմէ, պ. Կոչէնի կը ներկայանայ, անգլիական դեսպանին պաշտպանութիւնը կը խնդրէ, որով զէմ, սուլթանին դէմ: Յիշատի, զարմանալի բան, և հաւատալ դժուար կը թուի, եւ սակայն այս է իրողութիւնը: Ի՞նչ է պատահել արդեօք Սերային մէջ, ինչ ոճեր գործուել է ինչ դաւադրութիւն: Գեռ շատ բան յայտնի չէ, բայց այս ճշմարտ է թէ Սերային մէջ խուսել մը մարդիկ փորձ փորձելու վրայ էին ներկայ սուլթանը դաժնեկէց ընելու և իւր տեղը Մուրադը նստեցնելու: Կինն ալ կային այդ դաւադրութեան մէջ, որ Սերայէն դուրս ունէր ձիւղեր: Այս առաջին անգամը չէ որ Մուրադը գահին վրայ բարձրացնելու փորձ եղաւ, թերեւ այս վեցերորդ, եօթներորդ անգամը լինի: Մինչև ցարդ կիններ մեծ դեր չէին խաղած, այս հեղուին, կերելի թէ, մեծ դերն իրենց յանձնուած էր: Վեց սուլթաններին, բոլորն ալ տարեց, 30—40 տարեկան, Սերային մէջ գործելու պաշտօն ստանձնած էին: Գաղտնիքն երբ իմացուեցաւ, բարձրագոյն հրաման կրելէ զանազ իսկոյն խեղադրամա՞ ընելու: Վեց դաւադրիւններէն մին կը յաջողի, հրաշքով մը պոճիլ իր դահլիճներուն ձեռքէն և կը զիմէ Անգլիոյ դեսպանին: Այս գերի եմ, կըսէ, Անգլիայ պարտականութիւն յանձն առած է, իր կողմէ դաշնակցութիւն, ազատել ամեն գերի իր տիրոջ ձեռքէն: Թիւրքիա թէ և վերջերս գերեաց ազատութեան համար դաշնը կուեց Անգլիոյ հետ, բայց ազատութիւն տակաւին չէ ուղած տալ այնքան չնքեղ աղէկանց և կանանց, որք Սերային մէջ, փաշաներու ապարանքներու մէջ կը հիւսն ու կը մայրն: Ես չերեք գերի մ'եմ, մանկութեանս ի վեր Սերային մէջ փակուած, Անգլիոյ պաշտպանութիւնը կը խնդրեմ: Պ. Կոչէնի զիմք անգլիական կառավարութեան շոգեմար կը դրկէ, աւելի ապահովութեան համար: Բայտնի է թէ ամեն ոք, բայց ոճրագործներէ, ապահով ապաստանարան կրնայ գտնել անգլիական շոգեմար մը վրայ: Այսպէսով սուլթանին ամեն տեսակ բռնութիւնէ և հարուածէ դերձ և ազատ կը մնայ:

Ամեն ոք կը հասկնայ թէ այս դէպքը չէր կրնար մնալ առանց ուրիշ և աւելի ծանր հետեւանքներ ունենալու: Նախ սուլթան Համիտ ինքն է, որ իւր զայրութիւնը կը թափէ կազմ Օսման փաշային վրայ զինքն իր նախարարութեան աստիճանէն զրկելով: Բէշիշայի զիւրազան պաշտօն ունէր Սերայը պահպանել և Սերային հետ իր տիրոջը անգնահատելի և լիարժեք չէ ցցուցած, մի յանգին մէջ շատ արթնութիւն չէ ցցուցած, մի յանգին օրու համար, զրոյց կայ թէ, Օսման փաշա նախարարական աստիճանը կորցնելէն ի դուրս մինչև իսկ արտը պիտի երթայ: Շատ մարդիկ Օսման փաշայի անկումն իմանալով կարծեցին թէ այդ եւրոպական դեսպանաց ճնշման արդիւնքն է և կամ մի նոր քաղաքականութեան նշանը: Չնայ գիտել ինչեղեղ թէ օսմանեան պետութիւնը ըստ ըստ երկրի մը կառավարութիւնը չէ, այլ միայն Սերային կառավարութիւնն է: Թէ ինչեր կը դաւանան հոն. փախստական կինը, կըսեն թէ, քստմեցողութիւն յայտնութիւնները ըրեր է: Իսր ամենապարտ յայտնութիւնը քրիստոնէական դեսպանին համար սա է եղեր թէ Անգլիոյ դեսպանին կողմէ առ սուլթանն երբեմն երբեմն գրուած նամակները շատ անհաւատարիմ կերպով կը թարգմանուին և սուլթանն անոնց մեղմ և չորհրդով չէ ոճ տեսնելով մեծ կարեւորութիւն չէ տուած երբեք այդ նամակաց: Պ. Կոչէնի իր առաջին թարգման պ. Սանտիսոնէն բացատրութիւն կը խնդրէ, խուզարկութիւններ կը լինին և սա յերեան կեղծ էր պ. Սանտիսոն թէ ներկայ և թէ նախորդ դեսպանաց թէ խուսեցը և թէ գրութիւնները շատ տարբեր կերպով թարգմաններ է: Ինչիւրն ամենաժամէ է և շատ մը անհամաձայնութեանց և չափաց պատասխանատուութեան կը բեռնեն այժմ պ. Սանտիսոնի վրայ: Անգլիոյ դեսպանին իր առաջին թարգմանը բանտարկած է և քիչ օրէն Լոնտոն պիտի դրկէ գաղտնիութեան համար: Ահաւարկ սուլթանին մը որ թերեւ ամեն քաղաքական դժուարութեանց զաղանքը բացատրէ և պատճառ լինի որ Լոնտոնայի դահլիճը մի նոր և աւելի արդիւնաւոր մեթոտ բռնէ իր քաղաքականութիւնը թիւրքերի մէջ յառաջ տանելու:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 18/30 յունիսի 1880

Ինչպէս գիտէք վասպուրականի սովը դեռ ծառայում է ձմերան չափ և աւելի միաստկար կերպով, վառն դի թող թէ գեռ հացը հին գինն է, նոթիները աւելի շատ են: Ինչպէս ասոր վրայ տեսակ տեսակ տաղափոխիլ հիւանդութիւններ, որով գրեթէ մի սպանական է դարձել: Հայկական մասնաժողովը չարունակում է փողեր հաւաքել և օգնել սակայն ժողովուրդներին բոլորովին անող է այդ մասին, մասնաւոր միջակ և հարուստ դասերը, որոց բոլորն ալ տուած համեմատութեամբ խիստ քիչ է (փողերի բացառութեամբ) թող որ եղած անանիւնը, որք մեծ վաճառականն ըլլալով միայն 10 բոլը տալու չամարեցին, ասոնց ամենին պատճառը կարելի է համարել միայն այն, որ ոչինչ զգացում չունին և բնաւ ազգասիրութիւն: Շնորհակալ եմք այս մասին մեր Ռուսաստանցի եղբայրներէ, որք մեղմ և աւելի ջանքով աշխատեցան և կաշխատեն դեռ: մեղմ և աւելի հեռու դըստնելով հանգիւնը: Սակայն աղէկ գիտնանք, որ դեռ մեծամեծ գումարներ հարկաւոր են բուժելու համար այն վերջերը, զոր շատ մը նամակներ սկսան մեզ իմացնել թէ. «Յայրենիքն իս մեծ վտանգի մէջ է». շնորհակալ եմք մասնաւոր ձեր խթանարկութեան այն գործունէութեան մասին, որով աղքատ մեծ բարերարութիւններ ըրած է մինչ այսօր և շարունակում է դեռ, սակայն ջանքից կրկնապատկելու ժամանակն է: Այսօրեան մեծ պէտքերն են որ հիւանդութիւն կեցած տեղեր մի քանի կարող բժշկիւններ զրկուին: Լուր առի որ տեղւոյս մասնաժողովը սկսած է կարողալը զայս ալ, սակայն այս մասին տեղեկ աւելի զիւրութիւն և միջոց ունեք և տեղւոյ ազգասիր բժշկապետաց ալ մեծ սպասելով մըն է այս իւրեանց ազգասիրութիւնը ցոյցնելու: Երբեք ամոր թէ դուք և թէ հասարակութիւնները արդէն զգացած էք այս պէտքը և կարողարած: սակայն եթէ չէ, մեծ պէտք կայ այս մասին, վառնել եթէ այդ տարափոխիլ անտը տարածի, ինչպէս որ հաւանական է, դժուար կըլլայ առաջը առնուլ առանց մեծամեծ զոհերու, մասնաւոր Հայաստանի կողմերը ուր բնաւ ազգէն բժիշկ մը անգամ չը կայ: նա ալ վասպուրականի եղբայր պէտքը երկու եղբայր և օքսանի անգլիական բժիշկները: Եթէ ասոնք չուտով չը մասակարարութիւն, վտանգը թերեւ ասորափոխիլ մեծանայ և այն առնել ան:

Կարելի ըլլայ փրկել հայրենիքն, միով բանիւ Հայաստանի ապագան և կացութիւնը մեծ վտանգի մէջ է: Կուգիլ սոյն աւերող սովուն չարժանիքն ալ գրել, սակայն թէ շատ երկար և թէ մոլթ կէտերով չըջապատեալ, անգութ և վատ ձեռքերով գործուած... որք ձեզ յայտնի ըլլալու են: Այժմ գրեթէ ուրիշ առարկայ չը կայ, այլ միայն սովին սաստկութիւնը, տեղւոյս մասուն ալ թէ և շատ ուշ, սկսաւ երբեմն յօդուածներ գրել: աղքատները գործերը դեռ մեծաւ մասամբ կիրկը մնան: այժմ քաղաքական կէտով մեր միջոցը գրաւած է Պերլինի դեսպանաժողովը: մասնաւոր տեղւոյս դեսպանաց հաւաքական ծանուցագիրը, որոյ երկու կէտերուն պատասխանեց Բ. Կուռն, սակայն Հայաստանի վերաբերեալ կէտին վրայ դեռ կը խորհի, բայց անյուսալի է որ յուսացուած օգուտը տայ, եթէ մեք առ թին հետ գոճող ըլլալով և չը միանալը և ժամանակէն օգուտ չը քաղեմք: Սր. պատրիարքը միշտ խառն գործերով չըջապատեալ է. ամեն օր հարստահարութեանց լուրեր պահաւ չեն, մասնաւոր վասպուրականէն, որ քուրդերը դեռ կաւերն անցեալին նման: Ուրեմն առեցողութիւն սովին վրա այս ալ, ուրեմն ուր կերթալ ասանկով վասպուրականի գրութիւնը, եթէ մեծ ջանքեր չըլլան փրկելու: Հայաստանի ժողովուրդը փորձը առած է և առաւ թէ ինչպէս պէտք է ինքնեք պաշտպանել, պատրիշ մը կրնայ գործադրել, սակայն անողութիւն սովը դեռ իր ճիւղներէն բովը կաշխատելու և ոչնչացնելու կաշխատի և շուտով հեռանալու միջոց չունի: Այս մասին Վ. Կ. Հայրապետի ցոյց տուած ստանադարութիւնը մեծ վերջ պատճառած է մեր դժբաղդ եղբայր, վառն դի հարկ էր որ նորին վեհապետութեան հովանաւորութեամբ ըլլար ամեն դրոճ, ամեն ճիշդ չը խնայէր հայրենեաց այս ամենապիտանի մասին ազատութեանը, առանց որոյ հայրենիքը պէտք է կորուսած նկատուի. և արդեօք ունինք Հայաստանին զատ յոյս մը, անիմանալի և անբուժելի խնդիր մը... Լրագրողը 81-րորդ թւոյն մէջ կարդացի մի յօդուած Վ. Պոլսի հայ մամուլը վերադարձ, որոյ հեղինակը ամենայն իրաւամբ կապացուցանէ տեղւոյս հայոց լրագրաց ստանադարութիւնը, որք ամենաճիշտ կերպով ոչինչ հետամուտ չեն հեռու տեղեր բնակող հայերու մասին և ըլլալու ալ հոգս չունին, այլ միայն զիրար բզկտել, մասնաւորաց ծառայել, կամ քաղաքական յօդուածներ գրել: Իսկ դուք այս և ամեն ազգայն կէտերով ալ մեծ դիմք բռնած էք և շարունակեցէք, և ամեն կերպով իրաւունք ունիք մեծ համակրութիւն վայելել ազգէն, ինչպէս որ վայելում էք: Մի առաջարկութիւն ալ պատ. մեծամուն հեղինակը «Բաֆֆիլին» իր բանասիրական «Երեւթի» մասին, այն է որ առանց զաղարկեցնելու լրագրող մէջ, շարունակէ, սակայն առանց ժամանակի կորստեան մի պատմութիւն կազմ և շուտով տպել տայ, որ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ, ինչպէս ուրիշ գործերը և մեծ փայլ պիտի տայ հայի պատմութեան: Նամակս գցելու ժամանակս լսեցի որ Բերլինի դեսպանաժողովը յունաց օգտակար կերպիւր գծեր է սահմանադրուել, որ արդէն յայտնի էր և թէ Բ. Կուռը մեծ ներդրութեան մէջ կը գտնուի. երկու օր է արդէն մեծ ջանք կընէ ատ կողմերը գործութեան ուղարկելու: Արդեօք հայոց գործն ալ դեսպանաժողովը սեղանին վրա ելաւ, թէ մէկ կողմ ձգեցին: ***

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵԱԿԻ ԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ
ԲԵՐԼԻՆ, 17 յուլիսի: Երէկ մարկիզ Յզենդ ուղերթիցաւ Ս. Պետերբուրգ:
ԿԱՆԿԱԼԱՐ, 17 յուլիսի: Բերրայուլի վրա յարձակվող Էյուր-խան 1200 մարդ և 36 թնդանօթ ունէր: Անգլիացիք կորցրին 2 թնդանօթներ:
ԼՕՆԴՕՆ, 17 յուլիսի: Հաստատ լուրերից երևում է, որ անգլիական կառավարութիւնը վճռել է ամենակարճ ժամանակում Հնդկաստան օդնական զօրքեր ուղարկել:
ԿԵՆԷԼ, 17 յուլիսի: Երէկ ուղերթիցաւ Ս. Պետերբուրգ Բունդէ իր պաշտօնը վարելու համար:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յուլիսի: Պետական բանկէ 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 Կ., երրորդ 91 ր. 87 Կ., երրորդ 93 ր. 50 Կ., չորրորդ 92 ր. 87 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ

